ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՄԱՅԱԿ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
(1895—1970)

Օգոստոսի 9-ին Լենինական քաղաքում վախճանվեց արժանապատիվ տ. Հմայակ ավագ քահանա Տեր-Խաչատրյանը:

Հանգուցյալը ծնվել է 1895 թվականին Բաղեշում (Բիթլիս), քահանայի ընտանիքում: Նա իր նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում: 1908 թվականին հանգուցյալը ընդունվում է Արմաշի դպրեվանքը, որտեղ ստանում է հոգևոր կրթություն և ձեռնադրվում սարկավագ:

1914 թվականին մի խումբ հոգևորականների հետ մեկտեղ աքսորվում է Տեյր Էլ Զորի անապատները, մինչև մրուր ըմպում է ազգային ճակատագրի դառնության բաժակը և, աստվածային նախախնամությամբ փրկվելով կոտորածից, հասնում է Երուսաղեմ: 1922 թվականին այդտեղից անցնում է Հունաստանի Սելևնիկ քաղաքը:

1925—1937 թվականներին Հունաստանի Էիոն քաղաքում ուսուցչական պաշտոն է վարում ու 1937 թվականին նա քահանա է ձեռնադրվում Կարապետ արքեպ. Մազլումյանի կողմից և քահանայագործում Հունաստանի Պատրաս քաղաքի հայ համայնքում:

1938 թվականին նշանակվում է Կրետե կղզու հայոց հոգևոր հովիվ:

1946 թվականին հանգուցյալն իր ընտանիքով ներգաղթում է Հայաստան և բնակություն հաստատում Էջմիածին քաղաքում: 1948 թվականին Ամենայն Հայոց Գևորգ Զ կաթողիկոսի կարգադրությամբ տեր Հմայակը պաշտոնավարում է Լենինականի ս. Աստվածածին եկեղեցում:

1956 թվականին հանգուցյալը իր բարեխիղճ և ձվիրյալ գործունեության համար Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից պարգևատրվում է լանջախաչով: Իսկ 1965 թվականին, իր երկարամյա և անբասիր գործունեության համար, արժանանում է ավագ քահանայության պատվի:

Տեր հայրը ուր էլ որ քահանայագործել է, վայելել է իր հոտի սերն ու համակրանքը և հանդիսացել է բարի և քաջ հովիվ:

Հանգիստ իր ոսկորներին:

Ф 1261 Գ ԶՊԵԵՎՍՏ